

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՄԱՍԻՆ

Բեղնաւոր աշխատասիրող Թամար Տասնապետեան ի լոյս ընծայած է (1996) Սուրբ «Աստուածածնի Մասին» քաւական ստուար (544 էջ) հատոր մը, որ կը ներկայացնէ իր գրած յօդուածներուն ժողովածուն:

Այդ յօդուածներուն մեծագոյն մասը կանխաւ հրատարակուած են Հասկ Ամսագրին մէջ 1987-1995 բուականներուն: Ատոնցմէ շատերուն կ'ընկերանան ֆրանսերէն լեզուով յաջող թարգմանութիւններ ալ:

Այստեղ հարկ կը համարինք արձա-նագրել քանի մը նկատողութիւններ:

1.- էջ 11.- «Գրիգոր Տաքեւացիի ծա-ռերը հարուստ են րովանդակութեան կողմէ, բայց կան նոր օտարամուտ գաղափարներ»: – Պէտք է ի մտի ունենալ որ Գրիգոր Տաքեւացիի Քարոզները խմբագրողը Զմեռան Հատորին մէջ խառնած է 33 քարոզներ «յայլմէ», իսկ Ամառան Հատորին մէջ ալ աւելցուցած է «յայլմէ» 21 քարոզներ:

2.- էջ 138.- «Մովսէս Քերրողին պիտի ընծայէինք երէ իմանայինք իր ինքնութիւնը»: – Մովսէս Քերրողը մեծանուն հեղինակը կ'ապրէր շ. 470-530 բուականներուն (Վանատուր, երուսաղէմ, էջ 113):

3.- էջ 167.- «On ne sait pas la date exacte de la mort de saint Grigor»: Այլուր (էջ 259) կը կարդացուի «Նարեկացին կնից իր մահը շ. 1003»:

4.- էջ 287.- Յովհան Ոսկեբերանի Աւետման նաոին համար ըսուած է թէ «Թարգմանուած է հաւանօրէն Ոսկեղարին. – Յիշեալ նաոին հայերէն լեզուն հաստատա-պէս կը ցուցնէ թէ ատոր թարգմանութիւնը յետ – ոսկեղարեան է:

5.- էջ 287.- Թէոփիլոսի նաոր ի Ծնունդն Փրկչին, «Ի մէջ տօնասիրաց» սկզբնաւորութեամբ, տես, Սիւն 1975, էջ 84-89, 119-124 եւ 243-244:

Գալով քննադական ուղղումներու՝ կը նշանակենք ստորեւ քանի մը հատ:

1.- էջ 17, վարի տող. – անցէ – անցուցանէ:

2.- էջ 100.- որք Աստուծոյ հաճոյ եղին ի կենդանութեան լըրոյ – լըրեանց:

3.- էջ 106.- քահանայակոչ եմ գտուրք կոյսն. – քահանայ կոչեմ ...:

4.- էջ 140.- եւ փարատին ցաւաւ հոգոց եւ մարմնոց եւ տաւնի յաւոր կիւրակէի. – եւ փարատին ցաւ հոգոց եւ մարմնոց ի տաւնի ...:

5.- էջ 156.- եւ սուրբ կոյսն հաց էր ի Տեառնէ տեսանեալ գառափեալսն. – եւ սուրբ կոյսն հայցէր ի Տեառնէ, տեսանեալ գառափեալսն:

6.- էջ 161.- եւ գիտացի թէ. – եւ գիտացին թէ:

7.- էջ 189.- եւ ոչ գմիտ ի գերագունից. – գմի ոք ...:

8.- էջ 198.- որ այսպիսի քանախօսեցաւ ընդ իս. – քանա խօսեցաւ ընդ իս:

9.- էջ 315.- հեռացեալ ի շնութենէ եւ մերձաւոր շինողին համայնից. – շինութենէ ...:

10.- էջ 504.- Յիսուս քաղմեալ յայն քանից մտուր. – յանքանից ...:

11.- էջ 506.- գնացին ի տեղիս լըրոց. – լըրեանց:

Թերեւս աւելորդ չէ յիշել որ, էջ 247, տող վերէն 11-17, «գի Աստուած ... եւ Որդւոյ» կրկնուած է:

Նոյնպէս կրկնուած է էջ 311, տող վերէն 4-5, «Անիմանային ... ծանուցաւ»:

Հայերէն ձեռագիրներու՝ մասնաւորա-բար ճառընտիրներու եւ Տօնապատեա-ններու մէջ, շատ են օտար հեղինակներէ թարգմանուած, կամ հայ հեղինակներէ շարադրուած շահեկան անտիպ նաոնք: Ատոնց հրապարակումը պիտի ընդլայնէր գիտական աշխարհի ծանօթութիւնները, եւ գնահատութեամբ պիտի դիմաւորուէր ընթերցող հասարակութեան կողմէ: Այդ մարզին մէջ ահաւասիկ Թամար Տասնապետեան կը կատարէ գովելի աշխատանք մը, յօգուտ հայ եւ օտար քանասիրութեան եւ մատենագրութեանց:

Ն. Ա. ԾՈՎԱԿԱՆ